


ՈՂՈՐՄԵԼԻ ԵՒ ՀԻՎԱՆԴԱԳԻՆ ՎԻՃԱԿ

Posted on August 18, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



Ռսկան Մխիթարեան, Լոս Անճելըս, 23 Օգոստոս, 2014

Կարելի չէ գուսպ ըլլալ եւ չարտայատուիլ այն դժբախտ երեւոյթի մասին, որ պարզուեցաւ մի քանի օրեր առաջ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ, ուր հաւաքուած էինք թաղման արարողութեան կարգին համար 55 երկար տարիներու բարեկամիս, միաբանակից եղբօրս՝ Պետրոս (վրդ.) Պերպերեանին, մեր վերջին յարգանքի տուրքը մատուցանելու համար:



Թաղումէն ճիշդ շաբաթ մը առաջ էր երբ բջիջային հեռաձայնս յանկարծ հնչեց: Անմիջապէս նայեցայ թէ ով էր հեռաձայնողը. « Այո՛ Պետրոս, վերջապէս կարգս եկաւ կ'երեւի. ուր՞ ես եղբա՛յր, այսքան ատեն է՝ մէջտեղ չկաս»: «Պետրոսը չէ» պատասխանեց խռպոտ ձայն մը միւս կողմէն, «Ճորճիկն է», եւ յանկարծ ահաւոր հեծկլտուք մը: Ես ալ շփոթի մատնուած անմիջապէս հարցուցի. «Խէր է, ի՞նչ եղաւ:» Վայրկեան մը հեկեկանքն ու հեծկլտուքը զսպելէ ետք ըսաւ. «Հայրս մեռաւ»: Պատմելէ ետք թէ ինչպէս հայրը ինկած եւ մեռած էր Մոնթեպելլոյի Հայ Կեդրոնին մէջ, ըսաւ. «Մէկ խնդրանք ունիմ Ռսկան Եղբայրս, եւ չեմ փափաքիր որ զիս մերժես»:

Ռսկան Մխիթարեան, Լոս Անճելըս, 23 Օգոստոս, 2014

Կարելի չէ գուսպ ըլլալ եւ չարտայատուիլ այն դժբախտ երեւոյթի մասին, որ պարզուեցաւ մի քանի օրեր առաջ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ, ուր հաւաքուած էինք թաղման արարողութեան կարգին համար 55 երկար տարիներու բարեկամիս, միաբանակից եղբօրս՝ Պետրոս (վրդ.) Պերպերեանին, մեր վերջին յարգանքի տուրքը մատուցանելու համար:



Թաղումէն ճիշդ շաբաթ մը առաջ էր երբ բջիջային հեռաձայնս յանկարծ հնչեց: Անմիջապէս նայեցայ թէ ով էր հեռաձայնողը. « Այո՛ Պետրոս, վերջապէս կարգս եկաւ կ'երեւի. ուր՞ ես եղբա՛յր, այսքան ատեն է՝ մէջտեղ չկաս»: «Պետրոսը չէ» պատասխանեց խռպոտ ձայն մը միւս կողմէն, «Ճորճիկն է», եւ յանկարծ ահաւոր հեծկլտուք մը: Ես ալ շփոթի մատնուած անմիջապէս հարցուցի. «Խէր է, ի՞նչ եղաւ:» Վայրկեան մը հեկեկանքն ու հեծկլտուքը զսպելէ ետք ըսաւ. «Հայրս մեռաւ»: Պատմելէ ետք թէ ինչպէս հայրը ինկած եւ մեռած էր Մոնթեպելլոյի Հայ Կեդրոնին մէջ, ըսաւ. «Մէկ խնդրանք ունիմ Ռսկան Եղբայրս, եւ չեմ փափաքիր որ զիս մերժես»:

Անմիջապէս Ճորճիկը հանդարտեցնելու մտադրութեամբ ըսի. «Գիտես որ քեզ չեմ կրնար մերժել» եւ մտիկ ըրի իր խնդրանքը: «Հօրս փափաքն էր որ դուն կարդաս իր դամբանականը: Առաւել եւս, իմ եւ ընտանիքիս բոլոր անդամներուն փափաքն է նաեւ որ դուն, որպէս ամենամօտիկ ընկերը եւ հարազատը, հօրս վերջին փափաքը կատարես: Քեզմէ աւելի լաւ մէկը զինք չի ճանչնար»:

Ինչպէ՞ս կրնայի մերժել Ճորճիկը զոր մանկութենէն կը ճանչնայի որպէս հարազատ: Խոստացայ դամբանականը գրել եւ յաւուր պատշաճի թաղման օրը կարդալ: Երկու օր ետք բջիջային հեռախօսիս վրայ պատուէր մը կար: «Ռսկան, Ճոն է (Ճօ Սամուէլեան, հանգուցեալին աներձագը): Եղբայր, շատ պիտի խնդրեմ որ կարդալիք դամբանականդ կանխաւ ինծի դրկես, որպէսզի կասկածներ չ'արթննան եւ մարդիկ պատճառներ չփնտռեն մերժելու»: Շա՛տ պարզ էր. զգացի թէ

ինչ կը դառնար քուլիսներու ետին: Անմիջապէս Ճորճիկին հեռաձայնեցի եւ իմացայ թէ շան գլուխը ո՛ր թաղուած էր: Ճորճիկին թախանձագին խնդրանքին անսալով, եւ չմերժելու համար միաբանակից եղբորս վերջին փափաքը, խոստացայ գրուփիւսս դրկել իր մօրեղբօր՝ Ճոյին:

Չանագան վստահելի աղբիւրներէ իմանալէ ետք մնացեալ պատմութիւնը, յստակ դարձաւ որ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, անհանգիստ էր որ ես միաբանակից եղբորս դամբանականը պիտի կարդայի, եւ այդու կերպով մը իրեն հետ պիտի բաժնէի եկեղեցւոյ բեմը՝ արարողութեան ընթացքին: Ի՛նչ նուաստացում իր առաջնորդական դիրքին ու հանգամանքին...: Հետեւաբար այլեւս յստակ էր որ Ճոն իր պատուէրը ուրկէ՛ ստացած էր: Դաւադրութիւնը լարուած էր:

Մթնոլորտը անելի չփոթորկելու մտադրութեամբ, հեռաձայնեցի Ճորճիկին եւ փոխանցեցի մտադրութիւնս. «Ճորճիկ ճան, լաւ կ'ըլլայ որ ես չխօսիմ, այս տխուր առիթով նոր ակեղծումներ չստեղծելու համար»: Ճորճիկ անդրդուելի մնաց, յայտարարելով. «Եթէ հօրս փափաքը պիտի չկարենամ կատարել, ես թաղման կարգը եկեղեցւոյ մէջ ընել չեմ տար, կ'երթամ ուղղակի գերեզմանոց»: Չկրցայ համոզել Ճորճիկը եւ որոշեցինք սպասել, յուսալով որ միևնույն հանգուցեալին յուղարկաւորութեան օրը մութ ամպերը կը փարատին, քանի որ իր մօրեղբայրը՝ Ճոն վստահեցուցած էր իրեն, թէ ամէն ինչ պիտի ըլլար ինչպէս որ իր հայրը փափաքած էր:

Եկաւ Թաղման օրը, Հինգշաբթի 21 Օգոստոս 2014: Երբ Ս. Խաչ եկեղեցի հասանք յայտարարուած ժամէն 15 վարկեան առաջ, միայն երկու տարիքոտ կիներ նստած էին, սակայն եւ այնպէս մթնոլորտը շատ ծանր էր եկեղեցւոյ մէջ: Չդիմանալով այդ ծանր մթնոլորտին, ելանք դուրս այն սկանկալութեամբ որ հարագատներ եւ բարեկամներ շուտով կը հասնին եւ թաղման արարողութիւնը կը սկսի շուտով:

Ժամը 11:30-ին տակաւին արարողութիւնը չէր սկսած, եւ բացի մատի վրայ համրուող հարագատներէն՝ եկեղեցին թափուր էր: Քովս նստող հօրեղբօրորդիս, որ այդքան մօտէն կը ճանչնար հանգուցեալը որպէս հարագատ, սկսած էր անհանգստանալ եւ հարց տալ. «Ու՛ր ես Դետրոսին բարեկամները, ընկերները»: Հիմա ուր որ ես կու գան ըսելով ինքզինքս կը մխիթարէի:

Տակաւին սպասման վիճակի մէջ էինք երբ Ճոն մօտեցաւ եւ խնդրեց որ դամբանականը կարդամ արարողութիւնը սկսելէն առաջ...: Առարկեցի ըսելով որ դամբանական կը կարդան յաւարտ արարողութեան. ծիծաղելի կ'ըլլայ եթէ նման բան մը ընենք: Մերժեցի կարդալ: Ճորճիկ յանկած բռնկած՝ ոտքի ցատկեց եւ բարձրաձայն յայտարարեց. «Եթէ ես հոս պիտի չկարենամ հօրս փափաքը կատարել, թող գան մեռելաթաղերը եւ այս դագաղը վերցնեն այստեղէն: Այս եկեղեցւոյ մէջ արարողութիւն չեմ ուզեր, երթանք գերեզմանատուն:»

Վլվլուկ մը սկսաւ եկեղեցւոյ մէջ: Սգակիր հաւատացեալներ անդրադարձան թէ ինչ կը կատարուէր: Հակառակ հարագատներու խնդրանքին, Ճորճիկ անդրդուելի մնալով՝ բարձրաձայն մեռելաթաղները կը փնտռէր դագաղը եկեղեցիէն գերեզման տանելու համար: Այս բոլոր իրադարձութեանց սկանջալուր, զգեստաւորուած եկեղեցականները անանդատունէն ներս չմտան:

Վերջապէս Ճորճիկը հանդարտեցնելէ ետք, արարողութիւնը սկսաւ որոշուած ժամէն 40 վայրկեան ետք: Ճորճիկ տակաւին ոտքի է եւ պատրաստ յօշոտելու իր ոտիները, որոնք մերժեցին իր հօր

վերջին փափաքը: Բախումը անխուսափելի էր. յանկարծ կարգ մը երիտասարդներ ճորճիկը առաջնորդեցին եկեղեցիէն դուրս եւ ուստի ճորճիկ ներկայ չգտնուեցաւ իր հօր թաղման արարողութեան...:

Հետեւաբար եզրակացութիւններ եւ ախտաճանաչումներ կատարելէ առաջ, համասփիւռ հայութեան կը ներկայացնեմ Պետրոս (վրդ.) Պերպերեանի համար պատրաստած դամբանականս, թէեւ ինք շատ աւելիին արժանի էր, ո՛չ միայն անոր համար որ 15 տարիներ ծառայած էր որպէս կուսակրօն եկեղեցական, նամանաւանդ որ նո՛յն Ս. Խաչ եկեղեցւոյ հովիւն ալ եղած էր հինգ տարիներ, այլ եւ որպէս մարդ եւ լաւ հայ: Եւ ահաւասիկ որպէս գնահանատանք իր տարիներու վաստակին՝ եկեղեցին վաթսուն տոկոսով թափուր էր: Չկային այնտեղ եկեղեցւոյ հաւատացեալները՝ իրենց նախկին հովիւին վերջին յարգանք մը մատուցանելու, չկային այդտեղ իր դպրեվանքի աշակերտները (ոմանք այժմ գործող քահանաներ Արեւմտեան Թեմէն ներս), եւ ո՛չ ալ ներկայ էին իր կուսակցական ընկերներու ստուար շարքերը.....:

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՊԵՏՐՈՍ (ՎՐԴ.)ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Սիրելի՛ սգակիր հարազատներ, այսօրուան սրտիս խօսքը կը սկսիմ մեծ բանաստեղծ Վահան Թեքեանի խօսքերով:

*«Թող ոչ ոքի մահըս չըտայ տխրութիւն,
Ուրախութիւն թող ան ըլլայ ամենուն,
Թշնամիին, բարեկամին ալ համար...:
Տառապանքիս վերջը եկաւ հոսկ ուրեմն,
Եւ անցնելով խաւար ու մեծ տունին սեմն
Ես կը հանգչիմ, պիտի հանգչիմ յաւիտեան...»:*
Վահան Թեքեան

Մեծ Եղեռնի արհաւիրքէն ճողոպրած ՄԵԾ բայց պարզ հայու մը զաւակն էր Պետրոս (վրդ.) Պերպերեան, աւագանի անունով՝ Զօհրապ Պերպերեան:

Անուններ, ածականներ կան, գորս երբ կը լսենք՝ սկամայ մեր մտապաստառին վրայ կ'ուրուագծուի այս կամ այն անձը, գործիչը կամ գրողը: Եթէ ըսենք «խելագար ամբոխ», անմիջապէս կը յիշենք Եղիշէ Չարեւնցը: Եթէ ըսենք «Աբիսողոմ Աղա», կը յիշենք Յակոբ Պարոնեանը: Եթէ ըսենք «Լճակ», կը յիշենք Պետրոս Դուրեանը: Եթէ ըսենք «Եղեգնեայ Գրիչ» անպայման կը յիշենք Դանիէլ Վարուժանը, եւ տակաւին կարելի է երկարել շարքը:

Ասոնցմէ զատ կան նաեւ պարզ, համեստ անուններ, որոնք գրիչ չեն շարժած, բայց գրիչէ մը աւելի գործ կատարած են իրենց անսահման եւ անսակարկ նուիրումով: Անոնցմէ մէկն է հանրածանօթ Հալեպահայ հարազատ հայորդի «Լանկըր Եախուպ» Յակոբ Պերպերեան: Պարապ տեղ չէ ըսուած որ «պտուղը ծառէն հեռու չ'իյնար»: Պետրոս Պերպերեան հարազատ արտացոլացումն է իր հօր եւ քիչ մըն ալ աւելի, նախ որպէս հոգեւոր մշակ ու ապա կրթական մշակ, հասարակական գործիչ, գրող, հռետոր եւ հրապարագիր:

Կեանքի Առաջին Հանգրուանը Հալեպի Մէջ

Պետրոս Պերպերեան, ծնած է Հալեպ, Ապրիլ 4, 1938-ին: Նախակրթութիւնը ստացած է Հալեպի Չաւարեան վարժարանին մէջ, իսկ երկրորդական ուսումը՝ Հալեպի Քարէն Եփփէ Զեմարանին մէջ: Հակառակ իր ուսումնական տենչերուն, նետուած է կեանքի ասպարէզ եւ աշխատած է իր եղբոր՝ Անդրանիկին հետ՝ վերջինիս ինքնաշարժերու արհեստանոցին մէջ մինչեւ 1960 թուական:

Կեանքի Երկրորդ Հանգրուանը Անթիլիասի Մէջ

1960 թուականին, անսալով իր ներքին ձայնին՝ ընդունուեցաւ Անթիլիասի Դպրեվանքի Ընծայարանի բաժնին մէջ, որուն ընթացքը յաջողապէս ավարտելէ ետք 1963-ին, Չարեհ Կաթողիկոսի մահէն չորս ամիսներ ետք, որուն հանդէպ մեծ սեր եւ ակնածանք ուներ, ձեռնադրուեցաւ կուսակրօն քահանայ իր երեք դասընկերներուն հետ. Եփրեմ Արք. Թապաքեան, Կոմիտաս Արք. Օհանեան եւ Եղիշէ Ծ. Վրդ. Մանճիկեան:

Խորէն Ա. Կաթողիկոսի կարգադրութեամբ անմիջապէս տնօրէն նշանակուեցաւ մայրավանքի շրջաբակին մէջ նորակառոյց Մարտիկեան Վարժարանին: Մեծին հետ մեծ, փոքրին հետ փոքր ըլլալու արժանիքը ուներ ան: Հաղորդական էր եւ միշտ ժպտերես: Աշուղն էր վանքին:

Կեանքի Երրորդ Հանգրուան՝ Գամիշլիի Մէջ

Տաճատ Արք. Ուրֆալեանի մեկնումով դէպի Լիբանան, առաջնորդական պաշտօնով, Գամիշլիի փոխ-առաջնորդական թեմը թափուր մնացած էր: Խորէն Կաթողիկոս լաւագոյն թեկնածու նկատած էր Պետրոս Վարդապետը որպէս տեղւոյն բարքերուն քաջածանօթ, նոյն ատեն հմուտ արաբախօս: Գամիշլիի իր գործակիցները մեծ գնահատանքով կը խօսին իր գործունեութեան մասին, ըլլայ ան եկեղեցական, կրթական եւ ազգային անդաստաններէն ներս: Հոս կ'արժէ վկայակոչել եզակի դէպք մը միայն, որ ինքնին շատ բան կը յայտնէ Պետրոս Պերպերեանի նկարագրին եւ արժանիքներուն մասին: Ինծի պատմած է այս դէպքը ժամանակին Գամիշլիի հովիւ եւ ականատես՝ Տ. Երուանդ Քահանայ Երեցեան: Երբ Սուրիական կառավարութեան գաղտնի սպասարկութեան անդամները խուժած են առաջնորդարան եւ պահանջած են Ազգային Վարժարանի բանալիները, Պետրոս Վարդապետ քաջաբար յայտարարած է. Նախ իմ դիակիս վրայէն կ'անցնիք ու ապա դպրոց կրնաք մտնել: Ահաւասիկ իր կոչումին հաւատարիմ գիտակից սպասաւորը:

Կեանքի Գորրորդ Հանգրուան՝ Գալիֆորնիոյ Մէջ

1974 թուականին, Խորէն Վեհափառի կարգադրութեամբ եկաւ Գալիֆորնիա ստանձնելու Մոնթեպելլոյի Ս. Խաչ Եկեղեցոյ հովուութիւնը: Տարիներ անխոնջ ծառայելէ ետք որոշեց ազգին ծառայել որպէս աշխարհական:

Արդէն երիտասարդական օրերուն ան խանդավառուած էր Հայ Յեղափոխական

Դաշնակցութեան գաղափարախօսութեամբ եւ արձանագրուած՝ Կուսակցութեան շարքերը: Սակայն, տարիներու հասունութիւնը զինք մղած էր ազգին ծառայելու եկեղեցւոյ ճամբով, իսկ այդ ճանապարհը իրեն համար եղաւ իսկապէս փոթորկալից եւ փշոտ...:

Այդ բոլորով հանդերձ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գաղափարախօսութեան բեմը մնաց անոր ամենէն լայն ծառայութեան դաշտը եւ սրտամօտիկը: Որպէս քաջ ատենախօս, բեմբասաց, պատգամաբեր ու ճառախօս հմայած է իր ունկնդիրները, զանոնք կապելով հայրենասիրական գաղափարախօսութեան: Իր երկրորդ տունն էր Հայ Կեդրոնը եւ հոն ալ աւանդեց իր հոգին քաղցր ժպիտով:

Այսօր իր մահը կը սգան իր հարազատները, մասնաւորաբար իր քառասուն տարիներու կողակիցը՝ Մէյը, իր սրտամօտիկ որդին Ճորճիկը, որուն այնքա՛ն սիրով կը գուրգուրար եւ կը խնամէր, իր աներծագերը, ճոն եւ Վարդգէսը իրենց ընտանիքներով, իր քենին՝ Լիւսի Տէյեան եւ զաւակները, եղբօր եւ քրոջ որդիները, ինչպէս նաեւ բոլոր սրտակից հարազատներն ու ընկերները:

Իր մահով, Լոս Անճէլըսը կը կորսնցնէ իր արժանաւոր զաւակներէն մէկը, որուն սիրտը բարբախեց ի սեր հայութեան: Օրհնեալ ըլլայ իր յիշատակը եւ հողը թեթեւ գայ իր յոգնաբեկ ոսկորներուն:

Ահաւասիկ շատ ամփոփ գիծերու մէջ, հոգեւորականի մը, կրթական մշակի մը 15 տարիներու վաստակին կարծ, անպաճոյճ պատմութիւնը: Ամենացաւալին հոն է որ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ աշակերտը եղած է Պետրոս (Վրդ.) Պերպերեանին՝ Անթիլիասի Դպրեվանքին մէջ, ո՛չ մէկ նշում կատարեց իր «յաւուր պատշաճի» անկապ խօսքերուն մէջ, որ հանգուցեալը որպէս կուսակրօն քահանայ հայ ժողովուրդին ծառայած է 15 երկար տարիներ: Ո՛չ ալ եկեղեցւոյ քահանան կենսագրական մը կարդաց, ծանօթացնելու հանգուցեալը անծանօթ ներկաներուն. կը թուի թէ կարելորդ փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններն էին սոսկ...:

Կասկած չկայ մեր մտքին մէջ որ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, յանուն քինախնդրութեան, որովհետեւ իր ամբողջ եութիւնը պարուրուած է փառամոլութեամբ եւ ամբարտաւանութեամբ, արգելք հանդիսացաւ հանգուցեալին վերջին փափաքին կատարուելուն պատշաճօրէն, թաղման կարգի արարողութեան աւարտին: Այսպէ՛ս պիտի յարգէր իր ուսուցչին վերջին փափաքը...: Ներելի՞ է այս վարքագիծը...: Այնպէս կը թուի, թէ տակաւին չէ մարսած այդ արդար եւ ճշմարիտ արձանագրուած տողերը որոնք գրուած էին իր անձին մասին, Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի Արեւմտեան Թեմէն խաբեբայութեամբ եւ խարդախութեամբ արտաքսման առիթով:

Արաբները շատ հետաքրքարական ասոյթ մը ունին, զոր թարգմանաբար կ'ուզեմ արձանագրել եւ բարձրականչել. «Թո՛ւ ալ օրդ կու գայ, ո՛վ բռնակալ» («Լաք եմ, եա գալէմ»): Ամենացաւալին եւ տխուր իրականութիւնը հոն է, որ այսպիսի փոքրոգի, սնանկ մտքեր եւ աղքատ ու ողորմելի հոգիներ, ին՛չ ին՛չ հաշիւներով կը նշանակուին առաջնորդական աթոռներու, որոնք մարդկային

ամենէն տարրական բարոյական սկզբունքները արհամարհելով կը գոռոզանան միայն իրենց սքեմով, որոնց տակ թագնուած է ամէն ապականութիւն եւ փտութիւն: Ձուկը գլուխէն հոտած է.....:

